

## ՕՐԷ ՅՕՐ

(ԵՍԵՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ)

Ապրիլ, 1893 թ.

Ջանազան զբաղմունքներ ինձ ստիպեցին Ջատկի վիզիտներս լիտա-  
ձգել ապրիլի մէկին:

Ի՞նչ ասել կուզի, որ այդ օրը ամենից առաջ քալերս ուղղեցի դէպի  
«Մուրճ»-ի խմբագրատունը:

— Դուք, պ. խմբագիր, ասում էր հրատարակիչը, շատ անգործնա-  
կան մարդ էք. գիտէք արդեօք թէ ինչքան բաժանորդ էք կորցնում և  
ինչքան թշնամի ձեռք բերում հէնց ահա պատճառով, որ մերժում էք  
տպել «Մուրճ»-ի արդիւսի «բարեկամներին», «պարզողներին», «պաշտողներին»,  
«սիրահարածներին», տեսակ տեսակ խղճածները:

— Իսկ դուք գիտէք այդ խղճածները ի՞նչ խղճածներ են:

— Ինչպէս չէ... Բայց և այնպէս պէտք է մի հնար գտնել տպա-  
գրելու այդ տնիմաստ, անճոռնի, անճաշակ գրութիւնները, որոնց «հնգի-  
նակները» իրանք իրանց մի մի հալ Բալրոն, մի մի հալ Դիկկենս, մի մի  
հալ Զոլա են կարծում...

— Եւ դուք կարծում էք որ այդ լիմար բաների տպագրութեամբ  
մեր բաժանորդների թիւը կ'աւելանալ:

— Ոչ միայն կարծում եմ, այլ և հաւատացած եմ... և ահա ինչու.  
այդ Բալրոնները, Դիկկենսները, Շիլլերները, Զոլաները— թուով լէզէօն—  
առաջինը հէնց իրանք բաժանորդ կը գրեն— էլ ուր մնաց որ դրանք  
կաշխատեն գրել տալ նաև իրանց բարեկամներին:

— Բայց ինչպէս անել:

— Ահա ինչպէս: Ես առաջարկում եմ «Մուրճ»-ին կից հրատարակել  
մի լաւելած, թէկուզ «Խուրջին» անունով, որը ձրի կուղարկւի բո-  
լոր բաժանորդներին, բայց, որը, աչտինքն այդ «Խուրջին»-ը, փողով  
կը լինի ահա անձերի համար, որոնց հեղինակութիւնները թէ ոտանաւոր-  
ներ, թէ ողբերգութիւններ, թէ կոմիդիաներ իրական կեանքից, թէ վէ-

պիկներ ու մեծ մէջեր ժամանակակից կեանքից և ակն տեղ կը գտնեն ալդ «Խուրջին»-ի մէջ։ Սրա գինը կարելի է նշանակել քսան ռուբլի, իսկ բացառիկ դէպքերում ուրիշ պալմաններ—օր., չի կարելի խոմ 20 ու ընդունել ամեն մի գրածք...

—Հիանալի միտք, բացականչեց պ. խմբագիրը, հէնց անունն էլ լաւ է սաղտամ, «Խուրջին»!

Հարցը մձուած համարելով եւ շտապեցի դուրս գնալ ու լսածս տարածել։

Ներս մտալ թէ չէ «Արձագանք»-ի խմբագրատունը—մշտածիծաղ պ. Արդարը առաջս վազեց և իւր կախարդիչ ու քաղցրալուր ձայնով—համեցէք, համեցէք, ասաց, բարով էք եկել, հազար բարի։

Մեր խօսակցութիւնը պտտում էր օրւայ բոլոր ալրուղ հարցերի ու խնդիրների շուրջը. ես շատ դո՛ւ մնացի ալդ քաղաքակրթած ասիացուց։ Մախլաս։ Սրբ պատմեցի «Խուրջին»-ի մասին—պ. Արդարը գլուխը շարժեց ժպտալով և հառաչելով ասաց—Տեսնում էք, սինեօր, ես ալդ վաղուց մտածելով («Փորձ»-ով միասելուց վետո) ամեն բան տպում եմ, ու էլի «Արձագանք»-իցս բան չի դուրս գալիս...

—Ջարմանալի զուգադիպութիւն, շարունակեց պ. Արդարը, ես էլ ունիմ մի պրոէկտ «Արձագանք»-ի կերպարանափոխութեան մասին։ Ուղում եմ «Արձագանք»-ս դարձնել ամենօրեայ։

—Ամենօրեայ, բացականչեցի ես։

—Այո, ամենօրեայ, բայց ոչ թէ հրատարակութիւն, ալ հեռախօսութիւն։

—Ալդ ինչպէս?

—Դուք լսած կը լինիք, որ Թիֆլիսում արդէն կազմում է հեռախօսական մի ցանց։ Աւ ես ուղում եմ օգտուել ալդ հանգամանքից ահա ինչպէս։ «Արձագանք»-ը կը դառնալ հեռախօսական։ Թիֆլիսի ամեն մի բաժանորդ կունենալ իւր տանը, կամ խանութում մի հեռախօսական ապարատ, (գաւառներ լիւր եւ հոգ չեմ տանում, մենք աչտեղ իսկի չունինք բաժանորդ)։ Օրւայ որոշ ժամերին ամեն մի բաժանորդ կը միացնի իւր ապարատը «Արձագանք»-ի խմբագրատան հետ։ Խմբագրատանը՝ ես, կամ իշխան Բէհրութեանը, կամ Նորդը, կամ Յարոն, կամ Քարամանը բարձր ձայնով կը կարդանք օրւայ բոլոր լուրերը, ալսպէս ասած, ի լուր մեր բաժանորդներին։

—Ալդ, խոմ, հիանալի բան է։

—Mais certainement <sup>1)</sup>, պատասխանեց պ. Արդարը, Բայց թէ դուք տեսէք թէ ալս ձեր ինչքան չարմարութիւններ է ներկայացնում զուտ

<sup>1)</sup> Դէ 'ի հարկէ։



«Արձագանք»-ի տեսակէտից (մի կողմ թողնելով տպարանական, գրաշարական, թղթի և այլ ծախքերի պակասելը ու խսպառ վերանալը)։

Առաջին. «Արձագանք»-ը հեռախօսուելու է—ուրեմն մէջ տեղ չի մնալ ոչ մի հետք, ոչ մի ապացոյց ասւած ի մասին։ Ասեց ու պրծաւ։ Ոչ կարմրելու տեղիք կը լինի, ոչ էլ հերքելու։ Ամեն մի լանդիմանութեան «Արձագանք»-ը կուեննալ իւր պատրաստ պատասխանը. «Դուք լաւ չը լսեցիք. մենք ալդպիսի բան չենք ասել, երեւի ապապարտոր փշացել է»։

Երկրորդ. Օրւաւ ամեն մի համարի ընթերցանութիւնը կը բաժանուի որոշ ժամերի ալ կարողով. հեռագիրները կը հաղորդեն առաւօտեան, ներքին լուրերը—ճաշին, իսկ պ. ֆ. Վարդանեանի անվերջանալի թարգմանութիւնների, իշխան Բէհուլթեանի «Մոցի դափտարի» ու Մկ. Էմինի թողած ժառանգութեան մասին երկար ու բարակ ընդդիմախօսութեան ընթերցանութիւնները կը կատարեն—երեկոյեան։

— Ինչո՞ւ երեկոյեան և ոչ թէ ճաշից չետո՞ւ—հարցրի ես միամտաբար։ Պարոն Արզարը ետ նստեց և ապա փսփսաց ականջիս.

— Ընթերցողների վրայ քուն բերելու համար։

— Այդ խոմ հանճարեղ միտք էք ունեցել. գեղեցիկը օգտակարի և առողջապահականի հետ միացնելը... Այդ բոլէին ներս մտաւ «Արձագանք»-ի Շիլլերը, ներողութիւն... պ. Շեկլէն և ես դուրս գնացի, ուղղելով քալերս դէպի «Արձագանք»-ի գաշնակիցը։

«Նոր-Գար»-ի խմբագիրը ինձ տեսաւ թէ չէ՝ սկսեց իւր գաղափարական ճառը կըմկըմալով ըստ իւր սովորականին.

— Ինչպէս ես արդէն ասացի ձեզ...

— Ներողութիւն—դեռ խօսի բան չէք ասել...

— Այո, ես արդէն ասացի ձեզ, որ, ալսպէս ասած, Թիֆլիսի ժողովարանը ուր, ալսպէս թէ ալնպէս տեղի ունեցաւ, եթէ կարելի է ալսպէս ասել, օրինակի համար, իմ ընդհարումը իմ անձնական թշնամուս, կամ աւելի ուղիղն ասած, ինչպէս ընդունւած է, իմ հակառակորդիս հետ,—եւ արդէն ասացի, որ ալդ օրը Թիֆլիսի ժողովարանը, ուր ժողովւել էր քաղաքիս ազգաբնակչութեան ամենախնտեղիկներ մասը—բացի ի հարկէ «Տիֆլիսկի Լիտտոկի» խմբագրից, որ ալդ օրը ժողովարանը, ալնպէս ինչպէս որ թելագրում է իմ աներկբայելի առողջ միտքս հիմնւած անշուշտ առողջ նորդարական տրամադրութեան վրա, ինչ ասել կողի, ասում եմ ես, որ ալդ օրը ժողովարանը չէր ժողովարան նեղ մտքով ըմբռնւած, ալլ, ալսպէս ասած, ալնպէս ասած, ինչպէս պ. Ն. Գրիգորեանն ասաց—պարարան, կամ ինչպէս պ. Բաբեանը ասաց—ճաշարան. . . Մի խօսքով ես չեմ ասում, որ ալդ օրւալ ժողովարանը, ալսինքն ուղում եմ ասել մօտաւորապէս նեղ մտքով ըմբռնած ժողովարանը կարելի լինէր դուրս տանել ալն

ժողովարանից որի մասին ես ասում եմ թէ պէտք է լալն մտքով հասկանալ...

Նս դուրս վազեցի խմբադրատանից և, ո՞հ զարմանք, դռան չէմքին ճակատ առ ճակատ եղալ պ. ճարտարապետ Նիկողայոս Գրիգորեանցի հետ:

— Նս, ըզուեց նա, ես ձեր ժողովների հախին կգամ...

— Ինչ էք ուզում ինձանից, պ. ճարտարապետ:

— Այո, ես ձեր հրատարակչական ընկերութեան ժողովի հախին կգամ. նա չընդունեց իմ ալն 2 սենեակները (որի լատակի փաշտերը և պատի պատառները ես նորոգեցի) առարկելով թէ իմ տունը գտնւում է քաղաքի կենդրոնից դուրս: Այո, ես ձեր հախին կգամ: Նս կկարգամ մի հրապարակական դասախոսութիւն և քաղաքիս պլանների վրա հիմնւելով կապացուցանեմ որ իմ տունը ալն մերժած երկու սենեակներով— գտնւում է ուղիղ քաղաքի կենդրոնում: Եւ ինչ ճարտարապետ եմ ես, որ ալլ չապացուցանեմ: Այո, տունս գտնւում է գետի ձախ կողմը— իսկ փոստատունը, հեռագրատունը, խմբադրութիւնները, թատրոնները, դատարանը, դուման, ոստիկանութիւնը, պալատը, մուշէշները, ժողովարանները և ալն ամեն էլ գետի աջ կողմն են. բալց ես ալնպէս ես կապացուցանեմ որ իմ տունը գտնւում է քաղաքի բուն մէջ տեղում...

— Ախր թե՛ ինչ, ասացի ու դիմեցի դէպի «Աղբիւր Տարազը»:

Ճանապարհին, Ալեքսանդրեան ալգու մօտ, մին էլ տեսնեմ մէկը կռնիցս բռնեց, Նս նաեցի և տեսալ՝ ում, Հռչակաւոր Բագրատ Միրիմանեանցին!

Նթէ կատկածում էք պարոնի հռչակի մասին— լսեցէք պատմեմ: Իբր նախանձախնդիր մէկը լուսաւորութեան գործին, նա իրան նւիրել է մանուկների դաստիարակութեան և ունի մի պանսիօն: Հասակաւորների մէջ դիտութիւն և լուսաւորութիւն տարածելու նպատակով նա լոյս է ընծաւել իբրեւ հրատարակիչ «ժողովրդական դրագարանի», երկու թէ երեք կիսատպուատ բրօշիւրներ: Իբր ախպեան էսթետիկական ճաշակի զարգացման— նա հանդիսացել է ներկալացուցիչ հանրալալտի Շրեդերի՝ վաճառելու սրա հիւանալի դաշնամուրները, մինչև որ չկալտուեց աւելի տիեզերահռչակ դաշնամուրաշէն մէկը— ալն է Դիդերիխսը և պ. Միրիմանեանը անցաւ սրա կողմը սրա աննաման դաշնամուրները ծախելու համար: Նոյն նպատակով, ալն է էսթետիկալի տարածման համար, պ. Բագրատը հանդիսացաւ իբրեւ խմբեասարկօ և Թիֆլիս հրաւիրեց կոնցերտներ տալու համար օրիորդ Նիկիտալին, մի գործ, որի համար ստացաւ անասելի թւով շնորհակալութիւններ «տգէզների» կողմից, ալսինքն տղամարդերի: Վերջերքումս գոհացնելու համար դժգոհ մնացած զեղեցիկ սեւին — պ. Բագրատը հրաւիրեց Ֆիգներին... որն ասեմ, որն



պատմեմ.— քանզի անթիւ են պ. Բազրատի ճակատը զարդարող փալունդ գահինները:

— Տոմսակ ունիք Ֆիգների կոնցերտին, հարցրեց ինձ պ. Բազրատը առանց թեա բաց թողնելու:

— Ո՛րտեղից, դուք արեք թանգ գներ էք նշանակել!

— Ուրիշների պէս դուք էլ էք արդ ասում Այ, տեսէք, ես վճարում եմ Ֆիգներին 2000 ռուբլի, թատրոնի վարձ 200 ռ., մանր ծախքեր 100 ռ., իսկ թատրոնի մուտքի գումարը— է միմիայն 1970 ռ. ամեն անգամին:

— Սակայն դուք վճարել էք Ֆիգներին 2000 ռուբլի՝ երկու կոնցերտի համար!

— Զարմանալի բժականդիրներ էք. ես ձեզ առիթ եմ տալիս էսթետիկական զարգնութիւն վազելելու, իսկ դուք ընկնում էք մանր մունր հաշիւների ետևից... ասաց ու վազեց դէպի արքունական թատրոնը, իսկ ես ներկայացալ «Աղբիւր—Տարազին»։ Երկու աշխատակիցները չարձակեցին վրաս միաժամանակ:

— Այդ ինչ լեզու է «Մուրճ»-ի լեզուն, ուր «Իզոլացիաների մէջ շատ անգամ նկատուում է մտքերի մթութիւն, հակասութիւն և լամենալն դէպս անկաշորդականութիւն»...

— Ի սէր Աստուծոյ, թողէք շունչ քաշեմ, պաղատում էի ես Դեռ տեսնեմք ինքը «Տարազ»-ը ինչպէս կարտապալուի:

— Ահա ինչպէս, պատասխանեց աշխատակիցներէից մէկը. իմ իզոլացիոն կվերջանալ արն բանով ինչ բանով որ սկսւել է «Մուրճ»-ինը: Նս ասում եմ իզոլացիոն վերջումը:

«Ահա ինչու համար մենք կցանկալինք որ լանուն քաղաքի ընդհանուր շահերի բոլոր ազգութիւնների առաջադիմական, ռազմասէր կուսակցութիւնները միանալին արդ ընդհանուր նպատակի համար և կազմէին իրենց մէկը (?) ընդհանուր Կանձնաժողով, ընտրելիներ ի մէկը (?) ընդհանուր 80 անւանեալ ցուցակ»:

— Մթնեց, աշխատեցի ես սրախօսել. լոյս տէք ինձ, լոյս, բղաւցի ես:

— Ներողութիւն, եթէ մթնել է, մենք մեր ասածները կըրտաբանենք: Միջանկեալ պիտի ասեմ որ «Տարազ» ի խմբագրութիւնը կատարեց իւր խոստումը և «Մուրճ»-ը մատենախօսելիս լուսաբանեց իւր մութ ոճը մի Աթթուրմալով (տես «Տարազ» № 14):

Սակայն շարունակեմ վիզիտներին պատմութիւնը: Փառք տալով Աստուծուն, որ լոյս աշխարհ ընկալ մթութիւնից, գլխակոր, ի մի դումարելով ստացած բոլոր տպաւորութիւններս, ես մօտեցել էի արդէն «Մուրճ»-ի խմբագրատան, երբ դումալի մուտքի մօտ կանգնած տեսալ իշխան Նապոլէոն Ամատունուն:

—«Ապտեղ, ասաց իշխանը ինձ դիմելով, դո՛ւմալի դահլիճում, ամսիս 11 ին, ժամը ուղիղ տասներմէկից սկսած ես կը տամ մի ներկայացում *высшей нации и вошпедства!* Հունարներ էք ուզում տեսնել՝ ալդ օրը համեցէք ինձ տեսնելու ինչ Եկեղ, ինչ Մեկեղ. ալդ ձեռնածուի հազար ֆոկուաները կոպէկով չեմ առնիր, մինչդեռ իմ ամեն մի օլինը հազարներ արժի:

—Իշխան, ալդ որ ասում էք «վըսշալա մագիա ի վոլչերստու» — ինչի վրա է հիմնւած. էլէքորականութեան, հիպնոտիսմի, մագնիտիսմի թէ բնութեան ուրիշ գաղտնիքները վրա:

—Մեր մէջ մնալ, շնջաց նա ականջիս, իմ հունարներին գաղտնիքը կարող է մատնել միայն ընկերութեանս գանձապահ Նազարէթ Տիգրանեանը:

Խօսք տալով անպատճառ ներկայ լինել հալ իշխան Նապոլէոնի ձեռնածութիւններին — ես մտալ «Մուրճ»-ի խմբագրատունը:

Սակալն, ով Աստուած, ինչ եմ տեսնում. ահագին մի բազմութիւն! կարծես ժողովւած լինէին քաղաքալին ընտրութիւնները «Մուրճ»-ի խմբագրատան մէջ կատարելու:

«Մուրճ» ի հրատարակիչը ինձ տեսաւ թէ չէ՝ մի կողմ քաշեց և տորելով ձեռները ասաց.

«Մուրճ»-ի «Խուրջին»-ը ո՛նի արդէն 9999 բաժանորդ և... նոյնքան աշխատակից:

\*  
\* \*

P. S. «Արձագանք» իւր № 45 խոստացել էր մատնանիշ անել թէ ինչ սկզբունքներով պէտք է ղեկավարել քաղաքալին դո՛ւմալի կանգիդատական ցուցակ կազմելու համար:

Եւ իրօք, իւր № 47-ում «Արձագանք»-ը, գրելով իւր խոստացած լօղւածը, չախտարարում է հետեւալը.

«Կատարում ենք մեր խաղումը»:

Հաւատում ենք!